«5-ՐԴ ԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N-5

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղում տեղի ունեցած ողբերգական դեպքի առնչությամբ ՀՌՀ կողմից խնդրահարույց դիտարկված ռեպորտաժների բովանդակությունը, արձանագրեց, որ

- Թեև դիտարկված ռեպորտաժների առանձին դրվագներ կարող են հնարավոր խնդրահարույց համարվել էթիկայի նորմերին և չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից, այնուամենայնիվ, հանձնաժողովն արձանագրում է, որ հեռուստաընկերությունը, անչափահասներին վերաբերող հիմնախնդիրները լուսաբանելիս, նախնառաջ ղեկավարվել է առավելագույն ճշգրտության և հավաստիության սկզբունքների ապահովման պահանջով՝ ելնելով հանրային տեղեկատվություն մատուցելու, սոցիալական իրականությունը լիարժեք արտացոլելու, ինչպես նաև խնդրի հրատապությունը պետական և հասարակական ուշադրության կենտրոնում պահելու նպատակներից՝ որևէ դեպքում առկա կարգավորումների խախտման դիտավորություն չունենալով:
  Միաժամանակ, հաշվի առնելով ռեպորտաժների խիստ զգայուն, առերևույթ և/կամ առավել խիստ վարչարարական մոտեցման կիրառման դեպքում ցնցող բնույթը, ընբռնելով դրանց թողած սթափեցնող ազդեցությունը, արդյունքում, տեսանյութի արտադրական գործընթացում ներգրավված աշխատակիցներին նախազգուշացվել է անչափահասներին վերաբերող հիմնախնդիրները լուսաբանելիս առավել նրբանկատություն ցուցաբերելու կարևորության մասին, հեռուստաընկերության բոլոր աշխատակիցներին խստորեն հանձնարարվել է հետայսու նման դեպքերում հրատապության գիտակցմամբ, սակայն անպայմանորեն հաղորդակցել ՄԻՊ կամ այլ մարմիններին՝ ստանալու համատասխան խորհրդատվություն, բացի այդ, 18:30-ի թողարկման խնդրահարույց կադրերի նկատմամբ կիրառվել է համապատասխան տեխնիկական մշակման գործիքակազմ, իսկ հարցազրույցի՝ երեխաների մասնակցությամբ ձայնային հատվածը մոնտաժվել է:

- Անչափահասների հիմնախնդիրներին վերաբերող տեղեկատվության առավելագույն ճշգրտության ապահովման և լրագրողական էթիկայի կանոնների պահպանման միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու նպատակով հանձնաժողովը հանդես եկավ նախաձեռնությամբ դիմելու Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ՝ էթիկայի հստակ նորմերի և չափորոշիչների սահմանման, ինչպես նաև նման զգայուն իրավիճակներում էթիկայի նորմերի կիրառման միասնականությունն ապահովելու նպատակով համագործակցության պատրաստակամություն հայտնելու համար:

/ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ